*ՆԱԽԱԳԻԾ*

# *ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ*

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

«___» _____ 2018 թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

## *ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԲԱԶՄԱՄՅԱ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՄԵՔԵՆԱՅԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Հիմք ընդունելով «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 34-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել ավելացված արժեքի հարկից ազատվող գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների մշակության ընթացքում կատարվող մեքենայացված աշխատանքների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

***«Հաստատում եմ»***

***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ***
***ՆԱԽԱԳԱՀ***

***Բ.ՍԱՀԱԿՅԱՆ***

## ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ

### ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

| Հ/Հ | ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ | ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ | ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ | ԹՎԱԳՐՈՒՄԸ |
|---|---|---|---|---|
| 1. | ԱՀ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ | Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | |
| 2. | ԱՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ | Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ | | |
| 3. | ԱՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ | Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ | | |
| 4. | ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ | Ա. ԼԱՉԱՐՅԱՆ | | |

*Առաջարկությունները և առարկությունները՝* _____

_____

_____

_____

_____

_____

_____

*Նախագիծը ներկայացնողը՝*
*ԱՀ գյուղատնտեսության նախարար* *Ժ. Միրզոյան*

«____» _____ 2018 թ.

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2018 թվականի _____ ___-ի
N _____ -Ն որոշման

**ՑԱՆԿ**
**ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԲԱՁՄԱՄՅԱ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՄԵՔԵՆԱՅԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ**

1. Հողի հարթեցում
2. Հերկ (կրկնահերկ)
3. Կուլտիվացիա
4. Սկավառակային ցաքանում (փոցխում)
5. Ցանքս
6. Պարարտանյութերի ցրում
7. Թունաքիմիկատների սրսկում
8. Առու քաշել
9. Բերքահավաք (հունձ, կարտոֆիլի քանդում)
10. Հակավորում (մամլում)
11. Խոտհունձ
12. Տունկ
13. Ցանքսերի և այգիների խնամք

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
# «ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԲԱԶՄԱՄՅԱ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՄԵՔԵՆԱՅԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

***Անհրաժեշտությունը***

«Ավելացված արժեքի հարկից ազատվող գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների մշակության ընթացքում կատարվող մեքենայացված աշխատանքների ցանկը սահմանելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 34-րդ կետի դրույթներն իրագործելու, այն է՝ ավելացված արժեքի հարկից ազատվող գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների մշակության ընթացքում կատարվող մեքենայացված աշխատանքների ցանկը սահմանելու անհրաժեշտությամբ:

***Ընթացիկ իրավիճակը և խնդիրները***

«Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում կատարվել են համապատասխան լրացումներ և փոփոխություններ, որի արդյունքում սահմանվել է, որ 2018 թվականի հունվարի 1-ից գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների մշակության ընթացքում կատարվող մեքենայացված աշխատանքները մինչև 2021 թվականի հունվարի 1-ը ազատվում են ավելացված արժեքի հարկից, և այդ աշխատանքների ցանկը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

Ներկայումս վերոնշյալ օրենքի 15-րդ հոդվածի 34-րդ կետի դրույթները չեն իրագործվում, քանի որ բացակայում է Արցախի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումը:

Սույն որոշման նախագծի խնդիրն է սահմանել Արցախի Հանրապետությունում ավելացված արժեքի հարկից ազատվող գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների մշակության ընթացքում կատարվող մեքենայացված աշխատանքների ցանկը:

***Նպատակը և բնույթը***

Սույն որոշման նախագծի նպատակն է ավելացված արժեքի հարկից ազատվող գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների մշակության ընթացքում կատարվող մեքենայացված աշխատանքների ցանկի սահմանումը, ինչն կնպաստի օրենքի համապատասխան հոդվածի կիրարկման ապահովմանը:

***Ակնկալվող արդյունքը***

Սույն որոշման նախագծի ընդունման արդյունքում կսահմանվի ավելացված արժեքի հարկից ազատվող գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների մշակության ընթացքում կատարվող մեքենայացված աշխատանքների

ցանկը, և այդ աշխատանքներն իրականացնող սուբյեկտները 2018 թվականի հունվարի 1-ից կազատվեն հարկային պարտավորություններից՝ ավելացված արժեքի հարկի մասով:

***<u>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք</u>***

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության, բուսաբուծության և բույսերի պաշտպանության և իրավաբանական բաժինների կողմից:

***<u>Այլ տեղեկություններ</u>***

«Ավելացված արժեքի հարկից ազատվող գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների մշակության ընթացքում կատարվող մեքենայացված աշխատանքների ցանկը սահմանելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

***ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ***
***ՆԱԽԱՐԱՐ*** ***Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ***

***ՏԵՂԵԿԱՆՔ***

***«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԲԱԶՄԱՄՅԱ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՄԵՔԵՆԱՅԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ***

«Ավելացված արժեքի հարկից ազատվող գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների մշակության ընթացքում կատարվող մեքենայացված աշխատանքների ցանկը սահմանելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

***ՏԵՂԵԿԱՆՔ***

***«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԲԱԶՄԱՄՅԱ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՄԵՔԵՆԱՅԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ***

«Ավելացված արժեքի հարկից ազատվող գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների մշակության ընթացքում կատարվող մեքենայացված աշխատանքների ցանկը սահմանելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

***ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ***
***ՆԱԽԱՐԱՐ*** ***Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ***

***ԻՐԱՎԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ «ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԲԱԶՄԱՄՅԱ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՄԵՔԵՆԱՅԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ***

«Ավելացված արժեքի հարկից ազատվող գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների մշակության ընթացքում կատարվող մեքենայացված աշխատանքների ցանկը սահմանելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

***ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ***
***ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Հ. ՀԱԿՈԲՅԱՆ***

***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ***
***ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ***

***Որոշման նախագծի անվանումը՝***

«Ավելացված արժեքի հարկից ազատվող գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների մշակության ընթացքում կատարվող մեքենայացված աշխատանքների ցանկը սահմանելու մասին»

***Նախագիծը ներկայացնողը՝***

ԱՀ գյուղատնտեսության նախարարություն

***ԱՀ կառավարության որոշումն ուղարկել՝***

1. ԱՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԱՀ արդարադատության նախարարություն
3. ԱՀ ֆինանսների նախարարություն

***Նախագիծը պատրաստողը՝***

ԱՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժին

_____ ***Հ. Հակոբյան***
(ստորագրությունը)

«_____» _____ 2018 թ.